ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐԱՑՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օտարերկրացիների Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու, ՀՀ տարածքում գտնվելու, բնակվելու, տարանցիկ երթևեկելու, ելքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիների հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են «Օտարերկրացիների մասին» 25.12.2006թ. ՀՕ-47-Ն ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք):

Օտարերկրացիները Հայաստանի Հնարապետությունում կարող են բնակվել, եթե ունեն Օրենքով սահմանված՝ ժամանակավոր, մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ: Ժամանակավոր կացության կարգավիճակը ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի թույլտվությունն է, որն օտարերկրացուն իրավունք է տալիս բնակվելու Հայաստանի Հանրապետության տարածքում որոշակի ժամկետով.

Օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է յուրաքանչյուր օտարերկրացու, եթե նա հիմնավորում է, որ գոյություն ունեն Հայաստանի Հանրապետության տարածքում մեկ տարի և ավել ժամկետով իր բնակվելը հիմնավորող հանգամանքներ: Օրենքը հստակ թվարկել է նաև այդպիսի հանգամանքների ցանկը:

Ըստ Օրենքի 17-րդ հոդվածի՝ ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու համար դիմումը ներկայացվում է միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմին՝ ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն (այսուհետ՝ Միգրացիայի ծառայություն), որը ՀՀ կառավարության սահմանած կարգով դիմումը քննարկում է այն ներկայացնելու օրվանից 30-օրյա ժամկետում, և որոշում է կայացնում օտարերկրացուն Ժամանակավոր կացության կարգավիճակ տալու կամ մերժելու մասին:

Օրենքի 19-րդ հոդվածով սահմանված են այն հիմքերը, որի դեպքում լիազոր մարմինը կարող է մերժել օտարերկրացուն կացության կարգավիճակ տալը: Մանավորապես, օտարերկրացուն կացության կարգավիճակ տալը կարող է մերժվել՝ եթե (…) կացության կարգավիճակ հայցելիս նա ներկայացրել է իր մասին կեղծ տեղեկություններ կամ չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթեր, կամ գոյություն ունեն տվյալներ այն մասին, որ նրա գտնվելը Հայաստանի Հանրապետությունում ունի այլ նպատակ, քան հայտարարվածը:

Այսպիսի իրավակարգավորումների պայմաններում տպավորություն է առաջանում, որ օտարերկրացուն ժամանակավոր կացության կարգավիճակի տրամադրման ողջ գործընթացն իրականացնում է Միգրացիայի ծառայությունը: Հետևաբար պրակտիկայում՝ որպես այդ հարցով վարչարարաություն իրականացրած պետական մարմին, օտարերկրացուն ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակի տրանամդրումը

մերժելու մասին որոշումները դատական կարգով բողոքարկելիս, այդ մարմինը ներգարվվում է որպես պատասխանող կողմ:

Սակայն, այս հարցով դատական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օտարերկրացիներին ՀՀ-ում կացության կարգավիճակի տրամադրումը մերժելու մասին Միգրացիայի ծառայության որոշումների դեմ բերված բոլոր վարչական բողոքներն ու դատական հայցերը նույնպես մերժվում են:

Վարչական բողոքների և դատական հայցերի մերժման հիմքում դրվում է ՀՀ կառավարության 07.02.2008թ. թիվ 134-Ն որոշման (այսուհետ՝ Կառավարության որոշում) 2-րդ հավելվածի 2-րդ կետով սահմանված այն կանոնը, ըստ որի՝ ***օտարերկրացուն Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ տալու հարցն անձնագրային և վիզաների վարչությունը համաձայնեցնում է ՀՀ Ազգային անվտանգության ծառայության հետ, որի հայտնած առարկության պայմաններում Միգրացիայի ծառայությունը չի կարող կրել հայցվող բարենպաստ վարչական ակտն ընդունելու պարտականություն;***

Այսպիսով, կատարված ուսումնասիրությունների արդյունքներով համոզվում ենք, որ Օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կացության կարգավիճակ ստանալու դիմումի մերժման որոշումը բողոքարկելու իրավունքը ձևական բնույթ է կրում և չի կարող պաշտպանել այդ իրավունքից օգտվող օտարերկրացուն:

Խնդիրը նրանումն է, որ ***թեև Օրենքով հստակ սահմանված է, որ օտարերկարցիների կացության կարգավիճակի հարցով վարչարարություն իրականացնող և որոշում ընդունող մարմինը Միգրացիայի ծառայությունն է, սակայն Կառավարության որոշմամբ հաստատված կարգի ուժով այդ վարչական մարմինը ինքնուրույն չի իրականացնում դիմումի քննություն և կաշկանդված է Ազգային անվտանգության ծառայության կարծիքով (համաձայնությամբ կամ առարկությամբ):***

Ընդ որում, ԱԱԾ-ի կարծիքի հիմքում դրված որևէ փաստ պատասխանողի կողմից չի ներկայացվում դատարանի քննությանը և գնահատական չի տրվում այդպիսի կարծիքի հիմանվոր կամ անհիմն լինելու հարցին: Ուստի նույնիսկ այն դեպքում, երբ Ազգային անվտանգության ծառայության կարծիքն ակնհայտ անհիմն է, միևնույն է դատական ակտով ևս հաստատվում է, որ Միգրացիայի ծառայությունը պարտավոր է առաջնորդվել այդ կարծիքով և մերժել օտարերկրացուն կացության կարգավիճակ տրամանդրելու մասին դիմումը:

Այսպիսով, Օրենքը մի կողմից Միգրացիայի ծառայությանը պարտավորեցնում է օտարերկրացուն կացության կարգավիճակ տրամադրելու մասին որոշում ընդունելիս առաջնորդվել Ազգային անվտանգության ծառայության կարծիքով, մյուս կողմից օտարերկրացուն իրավունք է տալիս վարչական կամ դատական կարգով բողոքարկել Միգրացիայի ծառայության որոշումը: Իրավունքի պաշտպանության այս մեխանիզմն ակնհայտ անարդյունավետ է, քանի որ բոլոր դեպքերում Միգրացիայի ծառայության ընդունած ակտի իրավաչափությունը հիմանվորվում է ԱԱԾ-ից ստացած բացասական

կարծիքով: Մինչդեռ օտարերկրացու կամ Միգրացիայի ծառայության համար սահմանված չէ ԱԱԾ-ի կարծիքի հիմքում ընկած փաստերին ծանոթանալու և դրանց դեմ առարկելու իրավական մեխանիզմներ: Ուստի, ***մեր դիտարկմամբ, օտարերկրացու կողմից՝ իրեն կացության կարգավիճակի տրամադրումը մերժելու մասին Միգրացիայի ծառայության որոշման բողոքարկումը անօգուտ է և չի կարող համարվել օտարերկրացու իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոց:***

Հուլիս 2025թ.

Կատարող, իրավաբան՝
Նաիրա Ավետիսյան

«Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպություն, Կենտրոնական գրասենյակ (Երևան)